


ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ

ՁԵՌՆԱՐԿ



ԳԱՎԱՌ - 2015

Ձեռնարկը մշակված է  
ԵՄ TEMPUS GOVERN ծրագրի շրջանակում և  
հաստատված է ԳՊՀ գիտական  
խորհրդի կողմից 2015թ.  
փետրվարի 7-ի թիվ 1 նիստում:

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն ձեռնարկը միտված է Գավառի պետական համալսարանում (այսուհետ՝ Համալսարան, ԳՊՀ կամ բուհ) որակյալ կրթական միջավայրի ձևավորմանը, կրթության որակի ապահովմանը, Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության որակի վերահսկմանը՝ դիտարկելով ներկա վիճակը և ծրագրելով բարելավմանն ուղղված գործողությունները, բացահայտելով խոչընդոտները, ինչպես նաև նախատեսելով հետագա զարգացմանը միտված քայլեր: Այն մշակված է ինչպես Համալսարանի գործունեության յուրաքանչյուր ոլորտ ուսումնասիրելու, այնպես էլ բազմակողմանի գնահատելու և բարելավելու համար: Որակի ապահովման ձեռնարկը նաև որակի ապահովման գործընթացների հիմքն է:

Որակի ապահովման քաղաքականությունը Համալսարանի զարգացման ընդհանուր քաղաքականության բաղկացուցիչ մասն է՝ ուղղված Համալսարանում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի (այսուհետ՝ ՄԿԾ) և Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության որակի ապահովմանը և բարելավմանը:

## II. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԳՊՀ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարանում որպես առաջնահերթություն հռչակված է կրթության որակի բարձրացումը, որակյալ ուսումնական, դաստիարակչական միջավայրի ապահովումը, որակի մշակույթի ձևավորումը:

Ուշադրության կենտրոնում է որակը՝ Համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում, այն է՝ իրականացվող ՄԿԾ-ների բովանդակության, նպատակների, կրթական ելքային արդյունքների հասանելիության, կրթական և հետազոտական արդյունավետ միջավայրի ստեղծման և շարունակական բարելավման, կրթական գործունեության միջազգայնացման, ուսումնական ռեսուրսների, օժանդակ ծառայությունների, կրթական տեխնոլոգիաների, կիրառվող ուսուցման և ուսումնառության մեթոդների մշտադիտարկման, վերահսկման, արդյունքների գնահատման, և բարելավման գործընթացներում:

Համալսարանում կրթության որակի ապահովման համակարգը գնահատում է իրականացվող ՄԿԾ-ների բովանդակության, կադրային, նյութատեխնիկական, ֆինանսական, մեթոդական, գիտական և այլ ռեսուրսների համապատասխանության մակարդակը Համալսարանի առաքելությանը:

Կրթական գործընթացի բոլոր բաղադրիչների որակի վերահսկման նպատակով մշակվել, ընդունվել, փոփոխվել և լրամշակվել են մի շարք կանոնակարգեր:

- Գավառի պետական համալսարանում զարգացման և բարեփոխման հայեցակարգ (հիմնադրույթներ) (2011-2016թթ.),
- Գավառի պետական համալսարանի հնգամյա ռազմավարական ծրագիր (2011-2016թթ.),
- Գավառի պետական համալսարանում կրթության որակի ապահովման քաղաքականության մշակման և իրականացման, կրթության որակի ներքին ապահովման ընթացակարգ (փոփոխություններով),

- Գավառի պետական համալսարանում կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովման և ուսումնամեթոդական բազայի բարելավման ընթացակարգ,
- Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական որակների գնահատման և որակավորման բարձրացման քաղաքականության մշակման ու իրականացման ընթացակարգ,
- Գավառի պետական համալսարանի ակադեմիական ազնվության հայեցակարգ,
- Գավառի պետական համալսարանի ուսանողների բողոքների քննարկման կարգ,
- Գավառի պետական համալսարանում սովորողների ուսումնառության արդյունքների բարելավման քաղաքականության մշակման և իրականացման ընթացակարգ,
- Գավառի պետական համալսարանում ուսուցման մեթոդների գնահատման և բարելավման ընթացակարգ,
- Գավառի պետական համալսարանում ուսուցանվող մասնագիտության կրթական ծրագրի մշակման, հաստատման, իրականացման ընթացքի մշտադիտարկման և բարելավման ընթացակարգ,
- Գավառի պետական համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիր,
- Շահակիցների պահանջների հաշվառմամբ ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման ընթացակարգ,
- Գավառի պետական համալսարանի կողմից առաջավոր փորձի ուսումնասիրման, վերլուծության և համադրման (բենչմարքինգի) ընթացակարգ,
- Այլ ակտեր:

Համալսարանում կրթության որակի գնահատման, մշտադիտարկման և բարելավման նպատակով ԳՊՀ խորհրդի որոշմամբ 2010թ.-ին Ակադեմիական քաղաքականության վարչության (այսուհետ՝ ԱՔՎ) կազմում ստեղծվել և մինչ այժմ գործում է ԳՊՀ որակի ապահովման բաժինը:

Համալսարանում կրթության որակի վերահսկման գործընթացներին ակտիվորեն մասնակցում են ուսանողները, դասախոսները, շրջանավարտները, ներքին և արտաքին այլ շահակիցներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրթության որակի վերահսկման, ինչպես նաև իրականացվող գործընթացների արդյունավետության ապահովման ուղենիշ է հանդիսանում ինքնավերլուծությունը՝ վերջին տարիներին շարունակական աշխատանքներ են կատարվում ՄԿԾ-ների որակի վերաբերյալ բնութագրիչ տվյալների բազայի ստեղծման ուղղությամբ: Այն ներառում է կրթական ծրագրի որակի վերաբերյալ հաշետվություններ, վերլուծական զեկույցներ, ուսանողների, շրջանավարտների, դասախոսների շրջանում անցկացված անանուն հարցումների տվյալների ամփոփումներ, ուսումնասիրությունների տվյալներ, ատեստավորող հանձնաժողովների հաշվետվություններ, ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ քննարկումների արդյունքներ, կրթական ծրագրերի վերաբերյալ գործատուների, արտաքին և ներքին շահառուների կարծիքներ և

դրանց համադրման ճանապարհով իրականացված վերլուծություններ և նոր ռազմավարական ուղղությունների մշակումներ:

Կրթության որակի ապահովման նպատակով, կարևորելով իրականացվող ՄԿԾ-ների ուսումնամեթոդական ապահովվածությունը, ինչպես նաև ուսանողների և դասախոսների էլեկտրոնային հաղորդակցությունն ակտիվացնելու համար Համալսարանում մշակվել և ներդրվել է «E-learning.GSU» էլեկտրոնային ուսուցման համակարգը, որը հնարավորություն է ընձեռում համացանցային տիրույթում տեղադրելու ուսումնական անհրաժեշտ նյութեր, անցկացնելու տեսադասախոսություններ, էլեկտրոնային կապի միջոցով պատասխանելու օգտվողների հարցերին, իրականացնելու առցանց խորհրդատվություններ: Համակարգը ոչ միայն նպաստում է ուսանողների, դասախոսների, աշխատակիցների շրջանում ուսումնառության և աշխատանքի նոր մշակույթի ձևավորմանն ու կատարելագործմանը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետման մակարդակի բարձրացմանը, այլև ծառայում է որպես կարևոր միջոց ուսանող-դասախոս հետադարձ կապի ապահովման համար: Կատարվում են շարունակական աշխատանքներ համակարգում ուսումնական փաթեթների համալրման ուղղությամբ: Անդամակցելով ուսանողների ակադեմիական շարժունության ապահովման տարբեր միջազգային ծրագրերի՝ խնդիր է դրվել համակարգը աստիճանաբար համալրել նաև անգլերեն լեզվով ուսումնական նյութերով:

Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացի որակի վերահսկման խնդիրները բուհում նույնպես համարվում են առաջնահերթ:

Գործընթացի օբյեկտիվության բարձրացման նպատակով, որպես գնահատման այլընտրանքային մեթոդ, կիրառվում է ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման էլեկտրոնային համակարգը (Examination.GSU), որն ապահովում է օբյեկտիվ և թափանցիկ գործընթաց: Կիսամյակից կիսամյակ էլեկտրոնային համակարգի բանկը համալրվում է նոր դասընթացների թեստերով:

Համալսարանը մասնակցում է Համաշխարային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» II վարկային ծրագրի շրջանակներում «Կրթական ծրագրերի կենտրոնի» և «Synergy. Ինթերնեյշնլ Սիսթեմզ» ընկերության միջոցներով մշակված մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի աշխատանքներին, որը հնարավորություն կտա Համալսարանում ունենալու տեղեկատվության հավաքագրման և պահպանման առավել արդյունավետ համակարգ, ինչն իր դրական ազդեցությունը կունենա կրթության որակի վերահսկման, մշտադիտարկման, որակի ներքին գնահատման և ակադեմիական գործընթացների էլեկտրոնային կառավարման գործում:

Դասախոսական կազմի մանկավարժական որակների կատարելագործման, առաջավոր փորձի փոխանակման, լավագույն փորձի տարածման նպատակով Համալսարանում պարբերաբար իրականացվում են սեմինար-խորհրդատվություններ՝ նոր կրթական տեխնոլոգիաների, ուսուցման և ուսումնառության ժամանակակից մեթոդների և այլ ուղղություններով:

Վարչական անձնակազմի շրջանում կրթության կառավարման գործում ունեցած հմտությունների զարգացման նպատակով բուհում մշտապես անցկացվում են սեմինարներ, խորհրդատվություններ՝ կրթության կազմակերպման գործընթացների, ուսումնառության ծառայությունների, բուհի հասարակական պատասխանատվության, ակադեմիական միջավայրի գնահատման, ներքին և արտաքին գնահատման արդյունքում վերահանված խնդիրների արդյունավետ լուծումների որոնման և այլ թեմաներով:

Համալսարանի և ուսանողների, դասախոսների, շրջանավարտների, գործատուների, ծնողական համայնքների միջև հետադարձ կապի ապահովման առավել արդյունավետ միջոցների ներդրման նպատակով Համալսարանում մշակվել և կիրառվում է ուսանողների շրջանում հարցումների, թիրախային այլ խմբերի կարծիքների հավաքագրման և արդյունքների մշակման համակարգչային ծրագիր, որը հնարավորություն է ընձեռում բարձրացնելու գործընթացի օպերատիվությունը, արդյունքների ամփոփման օբյեկտիվությունը, ուսանողների պատասխանների արժանահավատությունը, ինչպես նաև թույլ է տալիս խնայելու ժամանակը, այլ ռեսուրսներ: Ուսանողների կողմից բարձրացված խնդիրներին արագ արձագանքման և ըստ հնարավորության լուծումներ տալու շնորհիվ ավելանում է հարցումներին մասնակցելու ցանկություն հայտնող ուսանողների քանակը: Տարբեր հարցաթերթիկների միջոցով մշտապես կատարվում են հարցումներ, արդյունքները ամփոփվում և ներկայացվում են Համալսարանի գիտխորհրդի քննարկմանը, գիտխորհրդի կողմից համապատասխան ենթակառուցվածքային ստորաբաժանումներին տրվում են հանձնարարականներ՝ ներկայացնելու բարելավման ուղիներ, ըստ համապատասխան ցուցանիշների:

ՄԿԾ-ների որակի, դրանցում սահմանված էլքային արդյունքների, նպատակների, ինչպես նաև ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության, Համալսարանի միջազգային համագործակցության ծրագրերի վերաբերյալ հանրությանը լիարժեք և պատշաճ ձևով իրազեկելու համար ԳՊՀ-ն համացանցային տիրույթում ներկայացված է Համալսարանի պաշտոնական ([www.gsu.am](http://www.gsu.am)), ուսանողական ([www.student.gsu.am](http://www.student.gsu.am)), էլեկտրոնային ուսուցման ([www.elearning.gsu.am](http://www.elearning.gsu.am)), էլեկտրոնային գրադարանի ([www.library.gsu.am](http://www.library.gsu.am)), շրջանավարտների և կարիերայի կենտրոնի ([www.career.gsu.am](http://www.career.gsu.am)) կայքերի, youtube պաշտոնական տեսահարթակի [www.youtube.com/user/gsuadmin](http://www.youtube.com/user/gsuadmin), facebook, twitter սոցիալական ցանցերի միջոցով, Համալսարանի հակակոռուպցիոն բլոգով:

Համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինը, մշտապես հետևելով Համալսարանի էլեկտրոնային տեղեկատվական համակարգեր այցելությունների քանակին, պարբերաբար ռեկտորատին ներկայացնում է թվային տվյալներ այցելությունների վերաբերյալ:

Կրթության որակը համարելով առաջնային՝ Համալսարանը ապահովել է մշտական մասնակցություն Հայաստանի հանրապետության, ինչպես նաև արտերկրի գործընկեր բուհերում կազմակերպվող տարբեր սեմինարների, գիտաժողովների՝ նվիրված որակի ապահովման կառուցակարգերին, բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումներին:

Համալսարանն ակտիվորեն մասնակցում է ՀՀ ԿԳՆ կողմից հայտարարված, ինչպես նաև ԵՄ «ՏԵՄՊՈՒՍ»-ի դրամաշնորհային ծրագրերին, որոնք էապես նպաստում են ինչպես կրթության, գիտահետազոտության որակի բարձրացմանը, կրթության միջազգայնացմանը, ուսանողների, դասախոսների, հետազոտողների ակադեմիական շարժունությանը, այնպես էլ կրթական միջավայրի բարելավմանը:

Համալսարանում գործող որակի ապահովման համակարգն ունի ցանցային բնույթ՝ աշխատանքները համակարգվում են Ակադեմիական քաղաքականության վարչության որակի ապահովման բաժնում՝ անմիջականորեն վերահսկվելով ուսումնագիտական գծով պրոռեկտորի կողմից, իսկ ֆակուլտետներին կցված են որակի ապահովման պատասխանատուներ:

Ենթակառուցվածքային ամենամյա ինքնագնահատման համար ռեկտորի հրամանով հաստատվում են ինքնավերլուծության գործընթացի կազմակերպման համալսարանական և ֆակուլտետային աշխատանքային խմբեր, որոնց կազմում ընդգրկվում են ուսանողներ, դասախոսներ, ամբիոնների վարիչներ, դեկաններ, փոխդեկաններ, ուսումնաօժանդակ անձնակազմի ներկայացուցիչներ: Ֆակուլտետային աշխատանքային խմբերը ղեկավարվում են դեկանների, իսկ համալսարանականը՝ ուսումնագիտական գծով պրոռեկտորի կողմից:

Համալսարանում կրթության որակի ներքին ապահովման գործընթացները կանոնակարգված են, սահմանված է պատասխանատուների իրավասությունների և պարտականությունների շրջանակը:

Համալսարանի որակի ներքին ապահովման գործընթացների կազմակերպման նպատակով բուհը տրամադրում է անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներ: Որակի ապահովման համակարգի ներդրման նպատակով արդյունավետորեն օգտագործվեցին Համաշխարհային բանկի «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրում և հետագա բարելավում» դրամաշնորհային ծրագրի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները, ինչպես տեխնիկայի, ուսումնամեթոդական գրականության, կահույքի, Համալսարանի գլխավոր մասնաշենքի մուտքի անվտանգության համակարգի, գրենական պիտույքների ձեռքբերման, այնպես էլ տեղական և միջազգային խորհրդատվական ծառայությունների գնման, սեմինարների, խորհրդակցությունների, վերապատրաստումների կազմակերպման, բուհի իրականացրած կրթական ծրագրերի որակի, ուսումնական այլ գործընթացների վերաբերյալ հանրության շրջանում տեղեկատվության տարածման, հրապարակայնության ապահովման նկատառումներով տպագրության, էթերաժամի գնման ու համապատասխան աշխատանքների իրականացման նպատակով:

Միջազգային և հանրապետական ծրագրերի շրջանակներում կազմակերպվող վերապատրաստումներին ԳՊՀ դասախոսների, աշխատակիցների, ուսանողների մասնակցության ապահովման նպատակով Համալսարանը տրամադրում է համապատասխան ֆինանսական միջոցներ:

Համալսարանի աշխատակիցների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի շրջանում օտար լեզվով հաղորդակցման հմտությունների զարգացման նպատակով կազմակերպվում են անգլերենի ուսուցանման բազմամակարդակ դասընթացներ:

Դասախոսների առաջարկություններն ու պահանջները մշտապես քննարկվում են ամբիոնների, ֆակուլտետների խորհուրդներում, մեթոդախավորումներում, ռեկտորատի և գիտական խորհրդի նիստերում: Ընթացիկ ուստարվա ընթացքում բացահայտված և հիմնավորված առաջարկությունները հաշվի են առնվում՝ հաջորդ ուսումնական տարվա գործընթացը պլանավորելիս: Ուսումնական գործընթացի որակը բարելավելիս՝ հաշվի են առնվում նաև ուսանողների, նրանց ծնողների, գործատուների, պրակտիկաների ղեկավարների, ատեստավորող հանձնաժողովի նախագահների և անդամների առաջարկությունները, դիտողություններն ու նկատառումները, առաջավոր բուհերի նմանատիպ ծրագրերի վերջնարդյունքների համադրական վերլուծության (բենչմարքինգի) արդյունքները:

Յուրաքանչյուր ՄԿԾ-ի հայեցակարգային ուղղությունները և նպատակները պաշտոնապես հաստատված են, շահակիցներին հասանելի՝ կարևորելով նրանց դերը որակի ապահովման գործընթացներում:

Համալսարանի գիտական խորհրդի, ֆակուլտետների խորհուրդների կազմերում ներգրավված են ուսանողներ, համալսարանական և ֆակուլտետային ուսանողական խորհրդի նախագահներ, ՈԻԳԸ անդամներ, ովքեր ունեն ձայնի իրավունք որոշումների կայացման գործընթացներում: Ուսանողներից ներկայացուցիչներ են մասնակցում նաև շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացում՝ որպես բողոքարկման հանձնաժողովի անդամներ:

Առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների ուսանողների շրջանում յուրաքանչյուր կիսամյակում կատարվում են հարցումներ ուսումնական գործընթացի կազմակերպման բոլոր բաղադրիչների՝ այդ թվում, գնահատման գործընթացների օբյեկտիվության, անցկացման որակի վերաբերյալ: Հարցումների նպատակն է գնահատել ուսանողների բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսումնական մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից, Համալսարանի սպասարկումից, վարչական անձնակազմի, դասախոսների աշխատանքից և ուսանողների հետ փոխհարաբերություններից, ինչպես նաև ուսումնական ռեսուրսներից, կրթական միջավայրի որակից:

Համալսարանի ֆակուլտետի խորհրդի կազմի մեջ մտնում են ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության նախագահներ, յուրաքանչյուր ամբիոնից դասախոսներ, մասնագիտական բաժիններից ուսանողներ, համամասնական կարգով ընտրվում են նաև ներկայացուցիչներ ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումներից: Ֆակուլտետի խորհրդի կազմում կարող են ընդգրկվել նաև ֆակուլտետի գործունեության հետ կապված մասնագետներ: Որակի ապահովման հարցերից բացի, ֆակուլտետի խորհրդի նիստերում քննարկվում են նաև ֆակուլտետների ամբիոնների որոշումների դեմ ամբիոնների դասախոսների բողոքները կամ անհամաձայնությունները:

Համալսարանն ակտիվորեն մասնակցում է հանրապետական և միջազգային տարբեր ծրագրերի: Դասախոսները, ուսանողները, վարչական անձնակազմը պարբերաբար մասնակցում են վերապատրաստման տարբեր դասընթացների և աշխատաժողովների, որոնց



արդյունքում, ինչպես նաև Համալսարանի փորձի հաշվառմամբ՝ մշտապես վերանայում, արդիականացնում և կատարելագործում են բուհի որակի ներքին համակարգը, կիրառվող գործիքակազմը և որակի ապահովման քաղաքականությունը: Յուրաքանչյուր կիսամյակում առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորողների, դասախոսների շրջանում իրականացվող հարցումների տվյալների ամփոփումից հետո գիտխորհրդի կողմից կառուցվածքային ստորաբաժանումներին տրվում են համապատասխան հանձնարարականներ՝ քննարկելու, համակողմանիորեն վերլուծելու որակի ապահովման այս կամ այն գործընթացը, լուծելու վերհանված խնդիրները:

Շարունակական բարեփոխումներ են կատարվում կրթության որակի ներքին ապահովման ընթացակարգերում:

Կրթության որակի մշտադիտարկումն իրականացվում է Համալսարանի ուսանողների, դասախոսների, գործատուների, այլ շահակիցների մասնակցությամբ:

Շարունակական աշխատանքներ են տարվում Համալսարանում կրթության որակի կառավարման կառուցակարգերի բարելավման նպատակով:

Համալսարանում իրականացվող կրթական, գիտական, լուսավորչական գործընթացների որակի վերաբերյալ մշտապես և անաչառ տեղեկատվություն է տրամադրվում ներքին և արտաքին շահակիցներին: Համալսարանի հանրության հետ կապերի ապահովման քաղաքականությունը ներառում է բուհում կրթական գործընթացի մասին լիարժեք իրազեկումը, տեղեկատվության տրամադրումը մասնագիտությունների, Համալսարանի կառուցվածքի և գործառույթների, ուսման վարձերի և տրամադրվող զեղչերի, ուսանողներին աջակցող հիմնադրամների, տեղեկատվություն ստանալու բոլոր հնարավոր աղբյուրների, բուհի միջազգային համագործակցության վերաբերյալ: Հասարակությունը պարբերաբար իրազեկվում է Համալսարանում իրականացվող ՄԿԾ-ների, կրթության որակն ապահովող կառուցակարգերի, շնորհվող կրթական աստիճանների, արտերկրի գործընկեր բուհերի, շահառուներին հետաքրքրող այլ հարցերի վերաբերյալ: Բուհում բոլոր գործընթացները կանոնակարգող փաստաթղթերը՝ կանոնակարգերը և ընթացակարգերը ֆակուլտետների, գիտխորհրդի և խորհրդի արձանագրություններն ու որոշումները հասանելի են շահառուներին թղթային և էլեկտրոնային տարբերակներով: Համալսարանի համացանցային կայքի, էլեկտրոնային փոստի միջոցով ապահովվում է ակտիվ հետադարձ կապ ներքին և արտաքին շահակիցների հետ: Հեռակա ուսուցման համակարգում սովորողների կրթական կարիքների ուսումնասիրման և ամփոփման արդյունքում անհրաժեշտություն առաջացավ էլեկտրոնային ուսուցման համակարգում ներառելու ուսանողի և դասախոսի ուղեցույցները: Տեղեկատվություն տրվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գեղամա» հեռուստաընկերությամբ՝ «Համալսարանական ժամ» հաղորդաշարի, Համալսարանի էլեկտրոնային կայքի, Համալսարանի պատրաստած և անվճար տարածվող տեղեկատվական թերթիկների, ուղեցույցների, ձեռնարկների միջոցով:

Համալսարանի՝ որպես հակակոռուպցիոն շարժման ջատագով բուհի փորձը ներկայացվել է Մակեդոնիայի Հանրապետության Սկոպիե քաղաքում կայացած «Թափանցիկ կրթական ցանց. Հակակոռուպցիոն միջոցառումներ կրթական համակարգում» թեմայով

միջազգային գիտաժողովին, ինչպես նաև Պորտուգալիայի Հանրապետության Բրազանսայի պոլիտեխնիկական համալսարանում տեղի ունեցած աշխատաժողովին: ԳՊՀ-ում գործում է «Թեժ գիծ», կա «վստահության արկղիկ», ստեղծվել է օբյեկտիվության ու անկաշառության, փոխադարձ հարգանքի ու վստահության վրա խարսխված աշխատանքային մթնոլորտ:

ՀՀ բուհերի միջև մրցակցության և դրանց հաշվետվողականության բարձրացման, բուհական համակարգի շահառուների՝ բուհերի մասին բաց և թափանցիկ տեղեկատվություն ստանալու հնարավորության ընդլայնման, ինչպես նաև հասարակության իրազեկվածության աստիճանի բարձրացման նպատակով 2013թ.-ին անցկացված ՀՀ բուհերի փորձնական վարկանիշավորման ազգային համակարգում Համալսարանը զբաղեցրել է առաջին հորիզոնականը երկու կրթական աստիճաններում՝ բակալավրիատում և մագիստրատուրայում, երեքից ավելի բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող բուհերի շարքում: Իսկ 2014թ.-ին նույն անվանակարգում Համալսարանը բուհերի ազգային վարկանիշավորման համակարգում զբաղեցնում է երկրորդ հորիզոնականը՝ Հայաստանի ամերիկյան համալսարանից հետո:

ՀՀ բուհերի վարկանիշավորումն իրականացվել է՝ հիմք ընդունելով համալսարանական գործունեության հիմնական ոլորտներում հաստատության արձանագրած արդյունքները, սովորողների ուսումնառության և դասախոսների գիտական աշխատանքների ցուցանիշները, միջազգային ծրագրերը, աշխատաշուկայի հետ կապը և այլ բնորոշ գործոններ:

### III. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

1. Համալսարանում կրթության որակի ներքին ապահովման քաղաքականությունը ներառում է իրականացվող ՄԿԾ-ների բովանդակության, նպատակների, կրթական ելքային արդյունքների հասանելիության, հետազոտությունների ռազմավարության և ուղղությունների, կրթական և հետազոտական միջավայրի ստեղծման և շարունակական բարելավման, գործունեության միջազգայնացման, ուսումնական ռեսուրսների, օժանդակ ծառայությունների, կրթական տեխնոլոգիաների, կիրառվող ուսուցման և ուսումնառության մեթոդների մշտադիտարկման, վերահսկման, արդյունքների գնահատման, երաշխավորման, պահպանման և բարելավման գործընթացները:
2. Համալսարանում կրթության որակի ներքին ապահովման քաղաքականության նպատակն է նպաստել ուսման որակի բարձրացմանը, կրթական գործընթացի արդյունավետության ապահովմանը, ուսուցման և ուսումնառության որակյալ կառուցակարգերի կիրառմանը, նախատեսված կրթական ելքային արդյունքների ձեռքբերմանը:
3. Համալսարանում կրթության որակի ներքին ապահովման համակարգը գնահատում է իրականացվող ՄԿԾ-ների համապատասխանությունը Համալսարանի առաքելությանը, նրա կադրային, նյութատեխնիկական, ֆինանսական, մեթոդական, գիտական և այլ ռեսուրսային ապահովմանը:
4. Կրթության որակի կառավարումը Համալսարանի մակարդակով պարբերաբար իրականացվող միջոցառումների համակցություն է՝ որակի բարելավման նպատակով, որը ներառում է.

ա) իրականացվող ՄԿԾ-ների և շնորհվող որակավորումների վերաբերյալ մշտապես նորացվող, անաչառ և օբյեկտիվ տեղեկատվության պարբերական հրապարակումը,

բ) Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացվող և հրապարակվող ամենամյա հաշվետվությունները, ուսումնահետազոտական կառույցների կողմից ներկայացվող և հրապարակվող ամենամյա հաշվետվությունները,

գ) Համալսարանի գործունեության տարեկան հաշվետվությունը,

դ) ֆակուլտետների և մասնագիտական ամբիոնների ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեությունը լուսաբանող կիսամյակային և տարեկան հաշվետվությունները,

ե) ուսանողների ակադեմիական տվյալների մուտքագրման, մշակման և ամփոփման եզրակացությունները,

զ) Համալսարանում ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների լրակազմը՝ բաղկացած Համալսարանի գործունեության բոլոր հիմնական ոլորտներն ընդգրկող ցուցանիշներից,

է) Համալսարանի դիմորդի ուղեցույցը (տպագրված և էլեկտրոնային տարբերակներով),

ը) առաջին կուրսեցիների տեղեկատվական փաթեթը՝ կրեդիտային համակարգում ուսումնառության վերաբերյալ,

թ) Համալսարանի ուսանողի ուղեցույցը,

ժ) կրեդիտային համակարգում ուսումնառության ուղեցույցը և դասընթացների տեղեկագիրքը,

ի) մասնագիտության հայեցակարգը:

5. Համալսարանում Կրթության որակի ապահովման նպատակով կազմակերպվում է մշտադիտարկում, որը ներառում է.

ա) արտաքին փորձագետների եզրակացությունները,

բ) հանրապետական և միջազգային առաջավոր նմանատիպ հաստատությունների հետ կատարված համադրական վերլուծության (բենչմարքինգի) արդյունքները,

գ) ուսանողների՝ ՄԿԾ-ներից բավարարվածության ուսումնասիրությունը,

դ) շրջանավարտների՝ ՄԿԾ-ներից բավարարվածության ուսումնասիրությունը,

ե) գործատուների՝ շրջանավարտների մասնագիտական գիտելիքներից, կարողություններից և հմտություններից բավարարվածության ուսումնասիրությունը,

զ) ուսանողների ընթացիկ և ամփոփիչ ատեստավորման արդյունքների ուսումնասիրությունը,

է) դիմորդների շրջանում իրականացվող ՄԿԾ-ների պահանջարկվածության աստիճանի ուսումնասիրությունը:

6. Կրթության որակի մշտադիտարկումը իրականացվում է Համալսարանի ուսանողների և դասախոսների մասնակցությամբ:

7. Համալսարանում կրթության որակի ապահովման նպատակով իրականացվում է որակի բարելավում, որը որակի կառավարման և որակի մշտադիտարկման միջոցով որակի բարձրացման շարունակական գործընթացն է, որակի մշակույթի ձևավորումը:

8. Որակի մշակույթը կրթական բոլոր գործընթացների համար ընդունելի և հիմնարար սկզբունքների համակարգ է, որը բնորոշ է Համալսարանի կազմակերպական մշակույթին, կառավարման համակարգին, ուսումնասության կառուցակարգերին:

9. Կրթության որակի պլանավորումը այն գործողությունների համակցությունն է, որոնք խնդիրներ և պահանջներ են սահմանում Համալսարանում որակի համակարգը կազմող բաղադրիչների ապահովման համար:

10. Կրթության որակի վերահսկողությունը Համալսարանում ՄԿԾ-ների իրականացման որակի ստուգման գործընթացն է:

11. Կրթության որակի ապահովման քաղաքականությունը ներառում է համադրական վերլուծությունը (բենչմարքինգը), որը թույլ է տալիս համադրել տարբեր պետությունների առաջատար բուհերում իրականացվող համանման ՄԿԾ-ների բնութագրերը՝ լավագույն փորձի որոշման, գործունեության հիմնախնդիրների ու բացթողումների ախտորոշման, ուժեղ և թույլ կողմերի բացահայտման հնարավոր վտանգների վերահսկման, դրանց կանխման և առաջավոր փորձի կիրառման նպատակով:

#### **IV. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

12. Կրթության որակի քաղաքականության մշակման, իրականացման, որակի կառավարման, վերահսկողության և բարելավման, Համալսարանում որակի մշակույթի ձևավորման, որակի քաղաքականության և համադրական վերլուծության իրականացման համար պատասխանատվություն են կրում Համալսարանի խորհուրդը, գիտական խորհուրդը, ռեկտորը, պրոռեկտորները, ֆակուլտետների ղեկանները, Ակադեմիական քաղաքականության վարչությունը, Որակի ապահովման բաժինը, որակի ապահովման ֆակուլտետային խորհուրդները, կրթական ծրագրերի ղեկավարները, ամբիոնների վարիչները, Համալսարանի այլ կառուցվածքային ստորաբաժանումները՝ համաձայն հավելվածի:

13. **Համալսարանի խորհուրդը** իրականացնում է հետևյալ գործառույթները՝  
ա) հաստատում է կրթության որակի ապահովման բուհական քաղաքականությունը, դրա շարունակական իրականացման ռազմավարությունը,  
բ) Համալսարանի տարեկան հաշվետվության շրջանակներում քննարկում է ՄԿԾ-ների որակի ապահովման գործընթացների արդյունքները և առաջադրում բարելավման ուղիներ:

14. **Համալսարանի գիտական խորհուրդը** իրականացնում է կրթության որակի ապահովման ներբուհական գործընթացների արդյունքների և ԱՔՎ Որակի ապահովման բաժնի եզրակացությունների քննարկումն ու հաստատումը:

15. **Համալսարանի ռեկտորը** ղեկավարում է Համալսարանում կրթության որակի ապահովման քաղաքականության և համապատասխան ռազմավարության մշակման աշխատանքները, ուղղորդում դրանց իրականացումը, ապահովում ՄԿԾ-ների Որակի ապահովման համակարգի ներդաշնակ գործունեությունը և դրա փոխգործակցությունը բուհական կառավարման այլ համակարգերի հետ:

16. **Համալսարանի պրոռեկտոր(ներ)ը** իրականացնում է (են) հետևյալ գործառնությունները՝  
ա) իրականացնում է կրթության որակի ապահովման բուհական համակարգի օպերատիվ կառավարումն ու վերահսկումը,

բ) ապահովում է գործառնական կապերն ու փոխգործակցությունը ներգրավված հիմնական կառույցների միջև, մասնավորապես ֆակուլտետների, Որակի ներքին ապահովման բաժնի, Ակադեմիական քաղաքականության վարչության, ամբիոնների և բուհական այլ՝ առնչվող ստորաբաժանումների միջև,

գ) հաստատում է կրթության որակի ապահովման/գնահատման ընթացակարգերը, ՄԿԾ-ների բուհական չափորոշիչներն ու որակավորման պահանջները, կրթության որակի ապահովմանն առնչվող կանոնակարգային և նորմատիվ այլ փաստաթղթեր:

17. **Ակադեմիական քաղաքականության վարչությունը** իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

ա) ապահովում է ՄԿԾ-ների մշակման և իրականացման որակի հսկողությունը և ստուգում դրանց համապատասխանությունը սահմանված չափանիշներին,

բ) համակարգում և վերահսկում է ուսումնական ստորաբաժանումներում ՄԿԾ-ների որակի ապահովման գործառնությունների և ընթացակարգերի իրականացումը,

գ) կազմակերպում է Համալսարանի ինքնավերլուծության, ինքնագնահատման գործընթացները և հաջորդող գործողությունների ծրագրումն ու վերահսկումը:

18. **Որակի ներքին ապահովման բաժինը** իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

ա) մշակում է կրթության որակի ապահովման ընթացակարգեր ՄԿԾ-ների հաստատման, ընթացիկ հսկողության և մշտադիտարկման գործընթացների համար, հետևում և աջակցում է Համալսարանի ստորաբաժանումներում դրանց իրականացմանը,

բ) պատասխանատու է ուսումնառության և դասավանդման որակի ներքին գնահատմանն առնչվող գործընթացների համակարգման համար,

գ) պատասխանատու է դասավանդման և ուսումնառության որակի չափման գործիքակազմի և համակարգված մոտեցումների մշակման համար,

դ) մշակում է ընթացակարգեր ՄԿԾ-ների և առանձին դասընթացների (մոդուլների) մակարդակում դասավանդման և ուսումնառության որակի գնահատման համար,

ե) գնահատում է դասախոսների աշխատանքը, ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեությունը, ինչպես նաև նրանց դասավանդման և գնահատման մեթոդները:

19. **Ֆակուլտետի ղեկանն** իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

ա) պատասխանատու է ֆակուլտետի մակարդակով կրթության որակի ապահովման և վերահսկման բոլոր գործառնությունների կազմակերպման և իրականացման համար,

բ) կազմակերպում է ֆակուլտետի ՄԿԾ-ների մշակման, իրականացման, մշտադիտարկման, պարբերական վերանայման ու կատարելագործման գործընթացները՝ որակի ներքին ապահովման ընթացակարգերին համապատասխան,

գ) ֆակուլտետի շրջանակում ապահովում է Համալսարանում կրթության որակի ապահովման քաղաքականության և ռազմավարության իրականացումը,

դ)ապահովում է անհրաժեշտ ռեսուրսներ (դասախոսական կազմ, լաբորատոր սարքավորումներ, գրականություն և այլն) և ուսումնառության օժանդակ ծառայություններ ՄԿԾ-ների իրականացման համար՝ նախապես սահմանված չափորոշիչներին համապատասխան,

ե)կազմակերպում է ստորաբաժանման ինքնավերլուծությունը՝ Համալսարանի ինքնագնահատման գործընթացի շրջանակներում:

**20. Որակի ապահովման ֆակուլտետային հանձնաժողովը** իրականացնում է հետևյալ գործառույթները՝

ա)վերահսկում է ֆակուլտետի ՄԿԾ-ների պլանավորման, մշակման, փոփոխման և դրանց որակի ապահովման գործընթացների իրականացումը,

բ)վերահսկում է ՄԿԾ-ների պատշաճ ռեսուրսային և մեթոդական ապահովվածությունը,

գ)պատասխանատու է ֆակուլտետում ՄԿԾ-ների որակի ապահովման և ներքին վերահսկման, ինչպես նաև Համալսարանի մակարդակով ընդունվող որոշումների հետևողական իրագործման հսկողության համար:

**21. Ուսանողներն** իրականացնում են հետևյալ գործառույթները՝

ա)ընդգրկվում են ուսման որակի գնահատման գործընթացներում՝ մասնակցելով ուսանողական հարցումներին, ապա և շրջանավարտների՝ Համալսարանում ստացած կրթությունից բավարարվածության հարցումներին,

բ)ընդգրկվում են Համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի, ֆակուլտետային խորհուրդների կազմերում,

գ)մասնակցում են Համալսարանի ՄԿԾ-ների որակի ապահովման գործընթացներին որպես ուսանողական ինքնակառավարման մարմինների (ուսանողական խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություն և այլն) ներկայացուցիչներ,

դ)մասնակցում են համապատասխան ֆակուլտետների ինքնագնահատման, ինքնավերլուծության գործընթացներին,

ե)ընդգրկվում են Համալսարանում ակադեմիական անազնվության դեպքերը քննող հանձնաժողովի կազմում<

զ)ընդգրկվում են բոողոքարկման հանձնաժողովի կազմում:

**22. Արտաքին գնահատողները (փորձագետները, շրջանավարտները, գործատուները)** իրականացնում են հետևյալ գործառույթները՝

ա)կատարում են ՄԿԾ-ների, ուսումնական պլանների արտաքին փորձաքննություն,

բ)ընդգրկված են շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում,

գ)Համալսարանի նախաձեռնությամբ կարող են մասնակցել ուսանողների գիտելիքների ընթացիկ, կիսամյակային և ամփոփիչ գնահատման գործընթացներին,

դ)մասնակցում են ՄԿԾ-ների ելքային արդյունքներից և շրջանավարտների մասնագիտական որակից գործատուների բավարարվածության հարցումներին:

**V. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ**

23. Համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների (ֆակուլտետների, ամբիոնների, վարչությունների, բաժինների և այլն) գործունեության որակի ապահովման անմիջական պատասխանատուները համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներն են:

24. Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության որակի նկատմամբ հսկողություն է (են) իրականացնում համապատասխան պրոռեկտոր(ներ)ը և արդյունքների մասին պարբերաբար զեկուցում Համալսարանի ռեկտորին և գիտական խորհրդին:


25. Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության որակը վերահսկում են Համալսարանի ռեկտորը և գիտական խորհուրդը՝ գործունեության հաշվետվությունների հիման վրա:

26. Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության որակի տարեկան վերահսկողությունն ու գնահատումը իրականացնում է Համալսարանի խորհուրդը՝ Համալսարանի ռեկտորի հաշվետվության հիման վրա:

27. Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության որակը ապահովելու համար սահմանված կարգով տրամադրվում են ֆինանսական, նյութատեխնիկական անհրաժեշտ ռեսուրսներ:

28. Համալսարանի Ակադեմիական քաղաքականության վարչության որակի ապահովման բաժինը կառուցվածքային ստորաբաժանումներին ցուցաբերում են բովանդակային, մեթոդական և այլ բնույթի աջակցություն:

ԳՊՀ-ՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ





Բովանդակություն

Ընդհանուր դրույթներ.....3

Որակի ապահովման համակարգի առկա իրավիճակը ԳՊՀ-ում.....3

Կրթության որակի ապահովման հիմունքներ.....10

Կրթության որակի ապահովման համակարգում ներգրավված մարմինները և դրանց գործառույթները.....12

Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության որակի ապահովման հիմունքներ.....15

ԳՊՀ-ում կրթության որակի ներքին ապահովման համակարգում ներգրավված հիմնական ստորաբաժանումները .....16

